Օտար լեզուների մասնախմբի 2022-2023 ուստարվա

տարեկան հաշվետվություն

Մասնախմբի նախագահ՝ Ն. Անանյան

2022-2023 ուստարում մասնախումբն աշխատել է հետևյալ կազմով հետևյալ դասարաններում՝

1. Ազատյան Անահիտ (անգլերեն) - 3-րդ, 5-րդ, 6-րդ,7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, դասարաններ I և II կիսամյակներում:

2. Անանյան Նունե (անգլերեն) – 4-րդ, 5-րդ, 6-րդ,7-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ, 12- դասարաններ I և II կիսամյակներում:

3. Մկրտչյան Հայկավարդ (ռուսերեն) 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ դասարաններում I կիսամյակում, և 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում II կիսամյակում:

4. Խաչիկյան Ինգա – 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ և 12-րդ դասարաններում

5. Մալվինա Սահակյանը (ռուսերեն) 2-րդ և 4-րդ դասարաններում:

Մասնախմբի բոլոր անդամներն աշխատել են առարկայական չափորոշիչներին համապատասխան, առաջնորդվել են թեմատիկ պլաններով, որոնք քննարկվել են մասնախմբի առաջին նիստում և հաստատվել տնօրենի կողմից: Հաստատվել է նաև մասնախմբի

նախագահի տարեկան աշխատանքային պլանը, որում ներառված են ուստարվա ընթացքում նախատեսվող աշխատանքները մասնախմբի գործունեության շրջանակներում:

Այս ուստարում դպրոցական բաղադրիչ հատկացվել է միայն ռուսերենին, 8-րդ դասարանում, II կիսամյակում: 10-րդ դասարանում գործարկվել է հումանիտար և բնագիտական հոսքի համակարգ: Հումանիտար հոսքում անգլերենին հատկացվել է շաբաթական 5 ժամ, ռուսերենին՝ 3 ժամ: Այս նորարարությունը մեր դպրոցում գործարկվել է առաջին անգամ: Գոհ էին թե՛ պարապող ուսուցիչները, թե' աշակերտները:

Նաև, այս ուստարում փորձարարական ծրագրի մեջ ներառվել են բոլոր դասարանները, բացի քննական 4-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններից:

2-րդ և 3-րդ դասարաններում եղել է բնութագրող գնահատական:

I և II կիսամյակներում օտար լեզուներով կազմակերպվել են տարբեր միջոցառումներ:

ՈՒստարվա սկզբում՝ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, տնօրենության կողմից ստուգվել է առարկայի դրվածքը դպրոցում:

Կատարվել են դասալսումներ, հստակեցնելու համար, թե աշակերտները ինչ են սովորել, ինչ չափով են յուրացրել նյութը, և ինչ են կարողանում անել:

Պարբերաբար ստուգվել է ծրագրերի կատարողականը, գրավոր աշխատանքների քանակի և տեսակի ապահովումը: Կատարել ենք դասալսումներ՝ փորձի փոխանակման ,մեթոդական նորամուծությունների նպատակով , շտկել թերությունները:

Պատշաճ կազմակերպվել է առարկայական օլիմպիադայի առաջին՝ դպրոցական փուլը, որին մասնակցում էին 8-12-րդ դասարանի 15 աշակերտ:

Երկրորդ՝ տարածաշրջանային փուլը անցկացվեց Կողբի 2-րդ դպրոցում:

Երրորդ՝ անգլերեն լեզվի մարզային փուլին մեր դպրոցից մասնակցել է 1 աշակերտ՝ Աբովյան Էլիլիան, և անցել է հանրապետական փուլ:

Ավարտական և փոխադրական քննություններին մասնակցել են բոլոր աշակերտները, օտար լեզուներից չի եղել անբավարար գնահատական:

4-ից-12-րդ դասարաններում անգլերեն և ռուսերեն առարկաներից անբավարար գնահատականներ չկան. առաջադիմությունը 100 % է:

Գումարվել է մասնախմբի 11 նիստ:

Digitally signed by NASIBYAN ASTGHIK 6910670051
Date: 2023.07.04 10:46:24 AMT